17. ՆԱԽՐՃԻՆ ՈՒ ԹԱՔԱՎՈՐԻ ԱԽՋԻԿԸ

Թաքավորի մեկ ըսեց.— Լալա՛, էլլանք էրկիք պտտինք, թե ի՞մալ կապրի ժողովուրթն։

Պտտան էրկիր, էկան ծովու քովն, տեսան հարուր տարեկան մենձ մարթ, նստեր է թուղթ գրե ու թալե ծովն։ Ըսին.— Բարև, պառավ մարթ։

— Ասսու բարի՞ն, բարով էկաք։

— Էտ ի՞նչ կէնիս։

— Հե՛չ, մարթու բախտ կը օրոշեմ։

— Ի՞մալ, թե մարթու բախտը։

— Գրեմ, կըսիմ, թե մարթն ի՞մալ պիտի էղնի, ջուր կը թալեմ։

— Է՛, դարդակ բան է։

— Ի՞նչ կուզե էղնի, իմ պաշտոն իտա ը։

Թաքավորն՝ հրպը.— Լավ, իշե՛ իմ ախչկան, ի՞նչ ալֆաթ էղնի։

— Իշիմ։

Գրեց թուղթն ու կարթաց, ըսեց.

Լավը վատին,
Վատն էլ լավին,
Վարթը փշին,
Քու ախչիկ կառնե
Նախրճու տղին։

— Լալա՛, ջալլա՛թ։

— Հ՚օրի՞, ըսավ, ջալլաթ։ Ի՞նչ էրեր ի օր։

— Հ՝օրի՞ ըսեցիր, օր քու ախչիկ կառնի նախրՃու տղին։

— Ըսեր իմ, ըսավ, կըսիմ. քու ախչիկ կառնե նախրՃու տղին։

Թաքավոր ներեց ըխտյարին ու գացին տուն։ Հասան տուն, մնկել թաքավորն էկավ էտ թաքավորի ախչիկն հ՝ուզելու։ Էս թաքավորն վերուց ախչիկն ու տվեց էն թաքավորի տղին, ըսեց.—Լալա՛, տեսա՞ր. ըխտյարին կավատաս, թե իմ ախչիկ կառնե նախրրՃու տղին։ Հըպը հ՝օրի՞ չառավ նախրՃու տղին։

Լալան ըսավ.—Թաքավորն ապրած կենա, գրվածը չի քանդվի։

Ու կտրեցին քառասուն օր ժամանակ, էկան ախչիկ տանելու։

Գարնան մայիս ամսին հարսնվորն էկավ, ախչկան առան, դրին կառեթին ու քաղքից խեյլի ճամփա գացին, մեկ լը թիփին լոնեց։ Թիփի՞, ի՞նչ թիփի, մերը մանուկն ուրացավ։ Թողին քուլլի հարսնվոր, փեսա-քավոր ամեն մե կողմ. մեննակ հարսը մնաց կառեթի մեջ, ձունը ծածկեց։ Մեկ էլ սապախտան նախրՃին առավ հորթեր, գնաց էտ թարաֆն, տեսավ օր ճամփու վրեն կառեթ կա, ձի կա՝ սատկած, մարթ կա՝ մեռած, ըսեց՝ «Ցավաշ, իշիմ տեսնամ իտ ի՞նչ բան է»։ Մեկ լը տեսավ՝ ախչիկն կը շարշըրվի կառեթի մեջ, օր ձան միչեն զուրս հ՝իգա։ Ըսեց.—Էտ ի՞նչ կէնիս, ախչի։

Ըսեց.— Հե՛չ, չըս տե՞սնա կը շարշըրվիմ, օր ձան տկեն հ՝ելլամ։

ՆախրՃին հանեց ախչկան ձան տկեն, շորերը թափ տվեց։

Ախչիկն ըսեց.— Ապե՛ր, ընձի տար ձըր տուն։

Ըսեց.— Իմա՞լ տանիմ քըզի մըր տուն. դու թաքավորի ցե՞ղ, խորոտիկ ախչիկ, ես խեղճ նախրՃի. տուն լը չունիմ, օր տանիմ։

Ըսեց.—Տո, ա՛խպեր, տար, ի՞նչ կէղնի։

— Իմա՞լ տանիմ, հորթերսի կը կորին։

— Հորթերուդ գինն ի՞նչ ածե։

— Հարուր մանեթ։

— Ա՛ն քըզի էրկու հարուր մանեթ. ընձի տար ձըր տուն։

ՆախրՃին ախչկան տարավ ուրան տուն։ Թաքավորի ախչիկ իրկուն շորվեն կերավ, հ՝ելավ քաշեց պալթոն գլխուն, պառկավ թունդրա։ կուշտ, խալի վրեն։ Մե քանի օր օր ապրավ, ըսեց.— Ապե՛ր, ընձի հ՝ուղե քու տղին։

Ըսեց.— Գառ ջան, դու թաքավորի ցե՞ղ, ես նախրՃի. իմ տղեն խլընքոտ։ Ես քըզի ի՞մալ հ՝ուզեմ։

Ըսեց.— Չէ՛, պիտի հ՝ուզիս։

Նախրճին մտածեց, թե՝ «Իտա թաքավորի ախչիկն օր իմ տղին կուզի, ես լը կառնիմ»։ Հ'ելավ հ'ուզեց, ապուրն էփեց, էրեց հարսնիք, կարգեց-պրծավ։ Մնաց առ ժամանակ, թաքավորի ախչիկ բերեց իրեք տղա. անըններ դրեց՝ մեկին՝ «Ի՞նչ օր էր», մեկելին՝ «Ի՞նչ օրով ծնվար», դրհա մեկելին՝ «Ի՞նչ օրի ես»։

Հարսն կանչեց նախրճուն, ըսավ.— Գնա՛ ֆլան գեղ, ինչքան օր պատի ուստա կա, դամրչի կա, բեր. պալատ պիտի շինինք։

— Ա՛յ հարս,— ըսավ,— մենք ուտելու հաց չունինք՝ ուտինք, պալատ ինչո՞վ շինինք։

— Գնա բիր,— ըսավ,— քու բան չէ։

Նախրճին դնաց, թոփ էրեց բերեց։ Թաքավորի ախչիկն շինեց պալատ, հասուց վեր, հոր պալատեն բանձր, օր ըսավ՝ առաջ արևն առնե իմ պալատին, ետև պապուս պալատին։

Ավուր մեկ թաքավոր ըսեց.— Լալա՛, հ'ելի՛ էրթանք, հեչ օր չէ, սաղ կը գտնամ, գոնե գերեզման գտնանք։

Հ'ելան պտտան, պտտան, էկան հասան Թոյրա[1], տեսան օր Թոյրան՝ իտմըլա խորոտիկ պալատ։ Ըսին.— Իտ ո՞րն ի շինե։

Ըսավ.—Լալա՛, իտ պալատ օր էտքան օր խորոտիկ է, միջունն դահա խորոտիկ կէղնի։ Քշե՛, էրթանք էղնինք էտուր տուն խոնախ։

Կառեթն օր էկավ, ախչիկն ու փեսեն կայնում ին բալքոն. տեսավ ախչիկն, օր իտա պապն ու լալեն էկան։ Ըսեց մարթուն.—Մարթ, ըտոնք մեր տուն խոնախ կէղնին, պատվով ընթունե։

Ինքն գնաց թաքավորական լայեխ կերակուլ պատրաստելու։ Ու տղեն ընթունեց, ըսեց.—Համմեցե՞ք, համմեցե՞ք։ Տարավ ներս։

Ախչիկն մարթուն թամբի էր էրի, թե եփ օր ես էրեխեքն կուղարկիմ քու քով, դու կըսիս մենձ տղին.— Բալա ջան, «Ի՞նչ օրի էր», գնա ըսե մամուդ, հաց բերե։ Եփ օր օրթանչա տղեն կիգա, կըսիս.— Բալա ջան, «Ի՞նչ օրով ծնվար», գնա ըսե մորդ, դատ բերե։ Եփ օր պզտի տղեն կիգա, ըսե. «Ի՞նչ օրի ես», բալա ջան, գնա մորդ ըսե, թըխ քըռչիկ[3] բերե։

Թաքավորի քովն էտ խրատը նախրճու տղեն կատարեց։

Թաքավորն ըսեց.— Լալա՛, իտա ի՞նչ անուն, ի՞նչ բան, իտ ի՞նչ բաս է, իտ ի՞նչ բան է։

---

1 Ախալքալաքի գավառի, այժմ Բոգդանովկայի շրջանի հայ կաթոլիկ գյուղ Թորյան է (Ս. Կ.)։

2 Կերակուր (Ս. Բ.)։

3 Կաղամբով, ձավարով շրալի ճաշ (Ս. Բ.)։

Ճաշն օր պրծավ, թաքավորն նախրճուն ըսեց.— Իտ ի՞նչ անուն է, իտ ի՞նչ պալատ է։

Ըսեց.— Իտ պալատ շիներ է իմ հարսն՝ թաքավորի ախչիկ։

— Իտ ի՞նչ ախչիկ է,— ըսավ,— լալա։ Լալա,— ըսավ,— ջալլա՛թ։

— է,—ըսավ,—թաքավոր, ի՞նչ բաս է, կայնի, համփերե, տեսնանք, ճնճուղ է, դո՞խ է, էտ ի՞նչ ջալլաթ կը կանչիս։

Թաքավորն ըսեց.—Կանչե իգա իտը պալատ շինողին։

Կանչեցին, էկավ, սրան հաքած գեստը[1], որը իրա տնից հարս Լրթլու վախտն էր հաքի։ Էկավ ներս մտավ, թաքավոր տեսավ օր ուրան ախչիկն է, հասան պադտվան, խնդացան։

Լալեն ըսեց.— Թաքավոր, մի՞տդ է, օր էն ծերուն պառավն ըսեց.

Լավը վատին,
Վատն էլ լավին,
Վարթը փշին,
Քու ախչիկ կառնե
Նախրճու տղին։

Տեսա՞ր, ի՛մալ առավ։ Բախտը մարթու—չի քանդվի՞։

---

1 Զդեստ (Ս. Բ.)